Հումանիտար գիտություններ №-2 (40) 2021 Гуманитарные науки

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԿՐՏՍԵՐ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա.Վ., ՂԱԶԱՐՅԱՆ Ա.Մ.

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Հայաստան, Վանաձոր, Տիգրան Մեծի 36

email: Hovhannisyan_58@mail.ru

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Հայաստան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

email: Kharmine@inbox.ru

Մանկապարտեզի և ընտանիքի կարևորագույն խնդիրներից է կանխարգելել և հաղթահարել երեխայի ապահարմարման գործընթացը սոցիալական միջավայրում: Կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաներն առավել զգայուն են մտերիմների հետ շփվելիս, դժվարանում են կողմնորոշվել նոր իրավիճակներում: Մանկապարտեզի մանկավարժների խնդիրն է կազմակերպել հարմարվողականության գործընթացը, լիարժեք ապահովել երեխայի կենսագործունեությունը մանկապարտեզում, որոշել մեծահասակների ներգործության սահմանները, բացահայտել միջավայրի նոր պայմաններին երեխայի ապահարմարմամբ պայմանավորված հոգեբանական պատճառները: Հոդվածում հիմնավորվել է կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների հարմարման մանկավարժական պայմանները և ներգործությունները:

Հիմնաբառեր. տագնապայնություն, հարմարման գործընթաց, ինքնագնահատականի մակարդակի բարձրացում, հույզերն ինքնուրույն կառավարում, նպատակային շտկում:

Ներկայացված է խմբագրություն 22.10.2021թ.

Նախադպրոցականի զարգացման խնդիրները առաջնային են, նկատի ունենալով մանկապարտեզի պայմաններին երեխաների ապահարմարման պատճառների հետազոտումը, որն անհանգստացնում է ծնողներին, դաստիարակներին, քանի որ 1) երեխայի հարմարման հնարավորությունները սահմանափակ են և նա անպատրաստ է կտրուկ անցնել սոցիալական նոր միջավայր, 2) մանկապարտեզին չհարմարվելու պարագայում երեխայի մեջ առաջանում են հուզական լարվածություն, հոգեֆիզիկական

զարգացման հապաղում: Նախադպրոցական հաստատություն ընդունվելը կապվում է երեխայի անհատականության անբարենպաստ հուզական և հոգեբանական փոփոխությունների հետ, որոնք պահանջում են նպատակամետ ներգործություններ: Բացի դրանից, նախադպրոցական տարիքի սկիզբը համընկնում է «Երեք տարեկանի ճգնաժամի» հետ, որի հաղթահարմամբ պայմանավորված է երեխայի հոգեկանի զարգացման հետագա ընթացքը: Ֆիզիկապես առողջ երեք տարեկան երեխան ձգտում է ինքնուրույնության և իմացական ակտիվության, սակայն նա դեռևս կարիք ունի մեծահասակների օգնության, նրանց աջակցության: Անկախության ներքին զգացողությունը երկակի է ընկալվում երեխայի կողմից՝ նա և՛ ուրախ է ինքնուրույնության փաստից, և՛ անհանգստացած, քանի որ վստահ չէ սեփական կարողությունների դրսևորումներում: Նշված ներքին հակասությունը նախադպրոցականի զարգացման շարժիչ ուժն է [1, էջ 80]: «Հարմարվողականություն» հասկացությունը տվյալ պարագայում մեկնաբանվում է որպես երեխայի ակտիվ կենսագործունեություն, նոր պայմաններին հարմարվելու գործընթաց և արդյունք: Այն կապված է երեխայի և նրա սոցիալական միջավայրի փոփոխությունների հետ: Որպես հարմարվողության օբյեկտիվ չափանիշ սովորաբար առանձնացնում են երեխայի ինքնուրույն գործունեությամբ զբաղվելու կարողությունը, նրա հուզական ինքնազգացողությունը, որը հանգեցնում է հավասարակշռվածության կամ տագնապայնության իրավիճակի: Հարմարումը սահմանվում է նաև որպես բժշկական - մանկավարժական խնդիր, որի լուծումը պահանջում է այնպիսի պայմաններ, որոնք կբավարարեն երեխաների հաղորդակցման կարիքները, անհրաժեշտ խնամքը, դաստիարակչական գործընթացի ճիշտ կազմակերպումը, սերտ համագործակցությունն ընտանիքի և հանրակրթության միջև: Առանձնացվում են հարմարվողականության հետևյալ կողմերը. 1) ֆիզիոլոգիական , սոցիալական միջավայրի պայմաններին երեխայի հարմարվելու գործընթացն ու արդյունքը, 2) սոցիալական՝ երեխայի հարմարումն է միկրոմիջավայրի (նաև մանկապարտեզի) պահանջներին, որոնք համապատասխանեցվում են երեխայի հետաքրքրություններին և կարիքներին [2, էջ 43], 3) հոգեբանական՝ միջավայրին հարմարվելու մեխանիզմների ակտիվացումն է՝ որպես ասիմիլացիա և ակկոմոդացիա: Երբ երեխան մանկապարտեզ է ընդունվում, առաջանում է նոր պայմաններին հարմարվելու խնդիր, քանի որ երեխայի հարմարվողական հնարավորությունները լիարժեք չեն: Երեխայի մեջ զարգանում է «հարմարվողականության սինդրոմը», որն ընտանիքից հեռանալու նրա հոգեբանորեն անպատրաստ լինելու հետևանքն է [3, էջ 67-69]: Հոգեֆիզիկական զարգացման փոխկապակցվածությունը վաղ տարիքի հատկանիշ է: Նրա առողջության վիճակի ցանկացած փոփոխություն ազդում է երեխայի նյարդային համակարգի և հոգեկանի վրա: Ընտանիքից բաժանվելը և երեխայի սովորական կյանքի ցանկացած փոփոխություն կարող են վախեր և բացասական հույզեր առաջացնել: Հարմարումը կախված է բազմաթիվ գործոններից՝ երեխայի առողջական

վիճակից, հաղորդակցական հմտությունների զարգացումից, նրա նյարդային համակարգի բնութագրերից, ինչպես նաև ծնողների և մանկապարտեզի աշխատակիցների արհեստավարժ գործողություններից: Հարմարման փուլը կրտսեր նախադպրոցականի համար բավականին ուժեղ փորձություն է, քանի որ հարմարվողականության արդյունքում առաջացած սթրեսային պահերը կարող են երկար ժամանակ խաթարել երեխայի հուզական վիճակը: Անհրաժեշտ է մանկապարտեզում թեմատիկ սեմինարների ընթացքում լուսաբանել այնպիսի թեմաների բացահայտման նոր մոտեցումներ, ինչպիսիք են՝ մեծահասակի և երեխայի հաղորդակցման զարգացման փուլերը, երեխայի զարգացումը հասակակիցների միջանձնային հարաբերություններում: Հարմարումը հանգեցնում է կամ դրական (մարմնի և հոգեկանի բոլոր դրական փոփոխությունների ամբողջության) արդյունքների, կամ բացասական (սթրեսի): Միևնույն ժամանակ, հաջող հարմարման համար կա երկու հիմնական չափանիշ՝ վարքի արտաքին համարժեքություն (նոր պահանջները հեշտությամբ և ճշգրիտ կատարելու ունակություն), - ներքին հարմարավետություն (հուզական բավարարվածություն) [4, էջ 57]. Հարմարվողականության հիմնական ցուցանիշներն են ՝ 1) երեխայի հուզական ինքնազգացողության կարգավորման ժամանակահատվածը, 2) մեծահասակների և հասակակիցների հետ նրա հարաբերությունները, 3) առարկայական օբյեկտիվ աշխարհը, 4) մանկական հիվանդությունների հաճախականությունը: Նախադպրոցական հաստատություն ընդունվելիս երեխայի կյանքում տեղի են ունենում բազմաթիվ փոփոխություններ. Օրվա կանոնավոր ռեժիմ, ինը և ավելի ժամ ծնողների բացակայություն, վարքի նոր պահանջներ, մշտական շփում հասակակիցների հետ և այլն: Այս բոլոր փոփոխությունները միաժամանակ են հայտնվում երեխայի կյանքում, ստեղծելով նրա համար սթրեսային իրավիճակ, որը առանց հատուկ մանկավարժահոգեբանական ներգործության, կարող է հանգեցնել տրամադրության անկման, տագնապայնության, կամակորության, վախի, սնվելուց հրաժարվելուն, հաճախակի հիվանդությունների: Ըստ հոգեբանների՝ երեխայի առարկայական գործունեության, որն այս տարիքում առաջատարն է, և խմբում հարմարվելու միջև գոյություն ունի սերտ կապ: Հիմնականում այն երեխաներնն են հեշտությամբ հարմարվում, ովքեր կարողանում են երկար ժամանակ, կենտրոնացված և բովանդակալից խաղալիքով խաղալ: Հայտնվելով մանկապարտեզում, բարձր հարմարվողականություն ունեցող երեխաները՝ 1) արագ արձագանքում են դաստիարակի առաջարկած խաղին, 2) հետաքրքրությամբ ուսումնասիրում են նոր խաղալիքները, 3) դժվարությունների դեպքում դիմում են դաստիարակին, 4) համառորեն փնտրում են ելքը գտնելու տարբերակ, 5) համարձակ դիմում են մեծահասակին, 6) սիրում են խաղալ մեծահասակի հետ՝ հավաքել աշտարակ, փազլ, կատարել կառուցողական աշխատանք: Ապահարմարվողականության դրսևորումներն են՝ 1) առարկաների հետ գործողություններ կատարելու կարողության ձևավորման բացակայությունը, 2) խաղում

կենտրոնացվածություն չդրսևորելը, 3) խաղալիք ընտրելիս թույլ նախաձեռնողականություն ցուցաբերելը, 4) հետաքրքրության բացակայությունը, 5) գործունեության ընթացքում դժվարություններից հուսահատվելը, 6) լացը, կամակոր կամ քմահաճ վարքի դրսևորումը, 7) գործնականում մեծահասակների հետ, հարաբերություններ ստեղծել չկարողանալը, 8) հուզական շփման մեջ չմտնելը: Երեխայի առողջական վիճակը, մեծահասակների և հասակակիցների հետ շփվելու ունակությունը, առարկայական և խաղային գործունեության ձևավորումը հարմարվողականության հիմնական չափանիշներ են, որոնցով կարելի է որոշել երեխայի մանկապարտեզ հաճախելու պատրաստակամության և այնտեղ բարեհաջող մնալու մասին: Երեխայի հարմարվողության ուսումնասիրությունները անցկացվել են Վանաձորի «Սուրբ Մ.Աստվածածին» թիվ 15 մանկապարտեզի կրտսեր նախադպրոցական տարիքային խմբում՝ 2021թ. հունիս-օգոստոս ամիսներին: Այն համընկել է ուսումնական տարվա վերջի, խմբերի արտահոսքի և ներհոսքի հետ: Հետազոտությանը մասնակցել են 30 երեխաներ, նրանց ծնողները և դաստիարակները: Հետազոտությանը մասնակցած բոլոր երեխաները մանկապարտեզ նոր ընդունվածներն են և, հետևաբար, գտնվում էին մանկապարտեզի պայմանների հարմարման գործընթացում: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մանկավարժական ներգործություններ. 1) «երեխայի հարմարումը մանկապարտեզում», թեմայով հարցաթերթիկ՝ ուղղված ծնողներին, 2) «մանկապարտեզում երեխաների հարմարման մակարդակի հայտորոշում, 3) Ռ.Սիրսի « Տագնապայնության ախտորոշման մեթոդիկա» 4) ծնողներին ուղղված հարցման նպատակն է ընտանիքում երեխայի վարքագծային դրսևորումների վերլուծության միջոցով գնահատել մանկապարտեզում հարմարման առանձնահատկությունները: «Երեխայի հարմարումը մանկապարտեզում» ծնողների կողմից հարցաթերթիկի պատասխանների արդյունքների եզրակացությունը ցույց տվեց, որ կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաներն ավելի դժվարությամբ են հարմարվում մանկապարտեզի պայմաններին, քան միջին տարիքի երեխաները: Հարցաթերթիկի պատասխանների վերլուծությամբ պարզվեց, որ ուսումնասիրված 30 երեխաներից 16 ունեն հարմարվողականության ցածր մակարդակ, 10-ը՝ միջին, իսկ 4 երեխա հեշտությամբ հարմարվում են նոր միջավայրում: Հարմարման ցածր մակարդակ ցուցաբերած երեխաները հաճախ չեն կարողանում համագործակցել հասակակիցների հետ, դժվարանում են դիմել դաստիարակին, ծանր են տանում բաժանվելը մորից և հաճախ չեն հարմարվում մանկապարտեզի կարգացույցին: Հարմարման միջին մակարդակ ցուցաբերած երեխաները իրենց վարքագծով մի փոքր տարբերվում էին և դաստիարակի միջամտությամբ համագործակցում էին միմյանց հետ: Դիտումները ցույց են տալիս, որ մանկապարտեզի դաստիարակներից ոմանք երեխայի հետ շփումներում հաճախ կիրառում են ավելորդ խստապահանջություն, զրկելով նրանց ինքնուրույնությունից: Դաստիարակի հետ համատեղ 5 օր շարունակ դիտարկվել է խմբում

յուրաքանչյուր երեխայի ընդհանուր վիճակը և գնահատվել է համապատասխան միավորներով: Վերլուծության արդյունքում յուրաքանչյուր երեխայի վերաբերյալ առանձնացվել է մանկապարտեզում նրա հարմարման մակարդակի միջին գնահատականը: Երեխաների հարմարման գործընթացի դիտման արդյունքում հայտորոշվել են հետևյալ մակարդակները՝ 6 երեխա- բարձր՝ հեշտությամբ հարմարվող (20%), 8 երեխա- միջին՝ դժվարությամբ հարմարվող (30%), 16 երեխա-ցածր՝ չհարմարվող (50%): Ռ.Սիրսի՝ «Տագնապայնության ախտորոշման մեթոդիկա» կիրառման արդյունքները ցույց տվեցին, որ տագնապայնության հատկություններից երեխաների մեծամասնության մոտ նկատելի է. 1) լացկան (50 %), 2) լարվածություն, ընկճվածություն (40%) 3) դժվարությամբ են ներառվում աշխատանքի մեջ (30%), 4)նեղացկոտ են (40%), 5) անհամբեր են (40%), 6) չափազանց զգայուն են (25%), 7) չափազանց բարձր կամ չափազանց ցածր են պատասխանում հարցերին (20%), 8) բավականին հազվադեպ են ագրեսիվությունը, գունատվելը, կարմրելը (15%), 9) դժվարանում են կենտրոնացնել ուշադրությունը (20%), անհանգիստ են (5%). 10) ձեռքերի քրտնարտադրությունը երեխաների մոտ չի նկատվել: Ըստ նշված որակների առկայության առանձնացրել ենք տագնապայնության դրսևորման հետևյալ մակարդակները՝ ցածր, ընդգծված, բարձր: Նախադպրոցականի ապահարմարման պայմանների հոգեբանամանկավարժական պատճառների վերհանման ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երեխայի մուտքը մանկապարտեզ կապված է նրա սոցիալական իրավիճակի զարգացման փոփոխության, հաղորդակցման շրջանակի ընդլայման, նոր պահանջների առաջացման հետ: Այս ամենը ստեղծում է անկայուն իրավիճակ, որն առանց հատուկ մանկավարժական ներգործության կարող է հանգեցնել տարբեր բացասական զգացողությունների: Նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի ապահարմարման հոգեբանամանկավարժական պատճառները պետք է դիտարկել անհատականորեն և փորձել վերացնել այն: Ներկայացնենք նախադպրոցականի ապահարմարման հաղթահարման մանկավարժական ուղիների նմուշօրինակներ. 1) «Իմ մայրիկը գալու է իմ ետևից չէ՞, ինձ չի մոռանա՞, ե՞րբ է գալու,...»: Պատուհանի մոտից երեխան չի հեռանում, սպասում է մորը, հասակակիցների հետ չի խաղում: Ունի ընդգծված տագնապայնություն: Երեխայի հետ կազմակերպված անհատական շտկողական աշխատանքին համատեղ իրականացվեց խորհրդատվություն ծնողի հետ, 2) երեխան գտնում է, որ իր մոտ ոչինչ չի ստացվում: Չի խաղում հասակակիցների հետ, դարձել է ինքնամփոփ: Դաստիարակի խնդիրն է երեխային համարձակություն ներշնչել՝ ստեղծել խաղային այնպիսի իրավիճակներ, որտեղ երեխան ինքնադրսևորման միջոցով, կբարձրացնի իր ինքնագնահատականը, 3) երեխան անհանգիստ է, քնի ժամին, չի քնում, , հաճախակի դիմում է դաստիարակին. «Դու ինձ սիրու՞մ ես»: Դաստիարակը պետք է կարողանա հասկանալ երեխայի անհանգստության պատճառը՝ նա ցանկանում է դաստիարակի կողմից ավելի հաճախ լսել իր հանդեպ նրա ջերմ, հոգատար, սիրո

վերաբերմունքի մասին, 4) երբ երեխաների մեծ մասը քնից հետո հագնվում են, ապա պարզվում է, որ կան երեխաներ, որոնք սկսում են լացել և դաստիարակը չի կարողանում հասկանալ պատճառը: Որոշ ժամանակ անց երեխան ասում է դաստիարակին, որ չի կարողանում հագնել վերնազգեստը: Դաստիարակը ուշադրության կենտրոնում է պահում երեխային ցերեկային քնից հետո, օգնում նրան, որ սովորի ինքնուրույն հագնվել: Ե՛վ ծնողները, և՛ մանկավարժները երեխայի ինքնասպասարկման կարողությունների յուրացումը, ընտանիքում օրվա ռեժիմի պահպանումը համարում են մանկապարտեզ մուտք գործելու պատրաստվածության չափանիշ: Մանկապարտեզում երեխաների դիտարկումը ցույց է տալիս, որ նրանք, ովքեր ինքնասպասարկման հմտություններ չունեն, առավել դժվարությամբ են հարմարվում մանկապարտեզի առօրյային: Հետազոտության արդյունքում մենք արձանագրեցինք մանկապարտեզում երեխաների տագնապայնության հաղթահարման ուղղությամբ միասնական գործունեության իրականացման բացակայություն: Ահա դրանով է պայմանավորված կրտսեր նախադպրոցականի մանկապարտեզում հարմարվելուն միտված խաղ-պարապմունքների նմուշօրինակների մշակումը (՝«Անձրև և արև» «Մեծ շրջան, փոքր շրջան», «Ուրախ ընկերներ», «Դիտում տերևաթափ /շարժախաղ/», « Գնդակով խաղում ենք» «Իմ ընկերները»), որոնք իրականացվել են հոգեբանամանկավարժական երեք ուղղություններով. 1) նախադպրոցականի ինքնագնահատականի բարձրացում, լարվածության նվազեցում, 2) երեխային անհանգստացնող իրավիճակներում իր հույզերն ինքնուրույն կառավարելու ուսուցանում:

Այսպիսով, մանկապարտեզում կրտսեր նախադպրոցականի սոցիալական հարմարմանն ուղղված մանկավարժական հետևյալ համակարգված ներգործությունները /հոգեբանամանկավարժական խորհրդատվություն ծնողներին, մանկապարտեզում երեխաների հարմարման մակարդակի հայտորոշում, Ռ.Սիրսի տագնապայնության ախտորոշման մեթոդիկա/, ինչպես նաև մշակված խաղ-վարժությունները մանկապարտեզի միջավայրում նպաստեցին կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական հարմարման գործընթացի արդյունավետությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս.Ա Մարության, Ա.Մ. Դալլաքյան- Նախադպրոցական մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ)։-Երևան,«Գասպրինտ»,2008թ, 288 էջ:

2. Социальная адаптация детей в дошкольных учреждениях / Под ред. Тонковой-Ямпольской Р.В., Шмидт-Кольмер Е., Атанасовой-Вуковой А.М. Медицина, 1980,265 с.

3. Николаева Е. И. Некоторые размышления о подготовке ребенка к посещению детского сада. Дошкольная педагогика 2011, № 9, с. 67-69

4. Костяк Т. В., Психологическая адаптация ребенка в детском саду. Москва, Академия, 2008, 176 с.

РЕЗЮМЕ

ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ СОЦИАЛЬНОЙ АДАПТАЦИИ ДЕТЕЙ МЛАДШЕГО ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА

ОГАНЕСЯН А.В., КАЗАРЯН А.М.

Правильно организованная деятельность педагога с ребенком может стать основой адаптации детей в детском саду. Все более актуальным становится определение пределов влияния взрослых на процесс вхождения ребенка в общество, выявление психологических причин, обусловленных дезадаптацией ребенка в новых условиях детского сада. Актуальность исследования определяется недостаточной разработанностью проблематики процесса адаптации детей младшего дошкольного возраста, к условиям детского сада, социальным запросом эффективных педагогических методов, обуславливающих оптимизацию условий процесса адаптации. У ребенка сильно развита потребность во внимании, физических контактах, ласке. В саду, где у воспитателя нет возможности уделять ребенку столько же внимания, как в семье, он чувствует себя одиноко, неуютно. Ребенок предпочитает играть один, не обращаясь к взрослому за помощью, не привлекая его к совместной игре. Сотрудничества со взрослым, необходимого для этого возраста, у него не складывается. Сниженная игровая инициатива при повышенной потребности в общении может привести к невротическим реакциям, таким как перепады настроения, беспокойство, упрямство, страхи, отказ от еды, частые болезни и т. д.. Организация игровой деятельности в адаптационный период, направленной на формирование эмоциональных контактов "ребенок - взрослый" и "ребенок – ребенок" обязательно включает игры и упражнения. Ребенок должен научиться применять свои адаптационные возможности, для чего ему необходимы формы организации разнообразных видов деятельности, соответствующие его возрастным особенностям, помогут ему в этом. В работе с детьми используют такие приемы, как демонстрация собственного позитивного действия, замена, переключение внимания, введение правил, игровые приемы, музыку, шутки и т.д. Нами предложен разработанный примерный комплексный проект деятельности педагога по организации адаптационного периода детей раннего возраста к детскому саду. Проект деятельности педагога - создание условий для безболезненного перехода ребенка из семьи в детский сад. Практическая значимость исследования заключается в систематизации и обобщении методических материалов, которые представляют практическую ценность для педагогов, работающих в группах детей раннего возраста.

Ключевые слова: тревожность, напряжение мышц, повышение самооценки, способность самостоятельно контролировать эмоции, целенаправленное коррекционное воздействие.

SUMMARY

PEDAGOGICAL CONDITIONS FOR THE SOCIAL ADAPTATION OF CHILDREN OF PRIMARY PRESCHOOL

Hovhannisyan A.V., Ghazaryan A.M.

Correctly organized activities of a teacher with a child can become the basis for the adaptation of children in kindergartens. It is becoming more and more vital to determine the limits of the influence of adults on the process of a child's entry into society, to identify the psychological reasons of the maladjustment of the child to the new conditions of the kindergarten. The actuality of the study is determined by the insufficient development of the problemizm of the process of adaptation of children of younger conditions of a kindergarten, the social demand of effective pedagogical methods that determine the optimization of the conditions of the adaptation process. The child has a highly developed need for attention, physical contact, affection. In kinder gardens, where the teacher does not have the opportunity to pay the child as much attention as in the family, he feels lonely and uncomfortable. The child prefers to play alone, without asking an adult for help, without involving him in joint play. Cooperation with an adult, being necessary for this age, does not work out for him. Reduced play initiative with an increased need for communication can lead to neurotic reactions, such as mood swings, anxiety, stubbornness, fears, refusal to eat, frequent illnesses, etc. Organization of play activities during the adaptation period aimed at the formation of emotional contacts "child - adult "and" child - child "necessarily includes games and exercises. The child must learn to apply his adaptive capabilities, for which he needs the forms of organizing various types of activities. They must correspond to his age characteristics and will help him in this. While working with children, they use such techniques as demonstrating their own positive action, substitution, switching attention, introducing rules, playing techniques, music, jokes, etc. We have proposed a developed approximate comprehensive project of the teacher's activities to organize the adaptation period of young children to kindergarten. The project of the teacher's activity is to create conditions for a painless transition of a child from family to kindergarten. The practical significance of the study lies in the systematization and generalization of teaching materials that are of practical value for teachers working with groups of young children.

Keywords: anxiety, muscle tension, increased self-esteem, the ability to independently control emotions, targeted corrective action.

Տպագրության է երաշխավորել մ.գ.թ., պրոֆեսոր Ս. Մարությանը 07.11.2021թ.